

ԱՆՏԻՊ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ 1909Ի ԿԻԼԻԿԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐՈՒ ՕՐԵՐՈՒՆ ԱԼԵՔՍԱՆՏՐԵԹԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՎԻՃԱԿԻՆ ՄԱՍԻՆ

Միհրան Մինասեան
mihran.min@gmail.com

ՄՈՒՏՔ

Համեմատաբար քիչ գրուած է Ալեքսանտրէթ (Իսքենտէրուն) Գաւառակի փոքրաթիւ հայկական գաղթօճախին մասին: Շրջանի հայաբնակ քաղաքներու եւ ասաններու անցեալը լուսաբանող առանձին մենագրութիւններ չկան: Անոնց մասին, իբրեւ սկզբնաղբիւր կարելի է նկատել պարբերական մամուլի էջերուն ցրուած քանի մը թղթակցութիւն, յուշագրութիւն եւ արխիւային անտիպ փաստաթուղթեր միայն, իսկ պատմագրութեան մէջ գաւառակի հայութեան մասին եղած հարեանցի ակնարկութիւնները հեռու են դարերու անցեալ եւ պատմական աւանդ ունեցող գաղթօճախին մասին լիարժէք ու ամբողջական պատկերացում տալէ:

Ծանօթ է, որ 1909ի Կիլիկեան Կոտորածները ընդգրկած են աշխարհագրական ընդարձակ տարածք, որ ներառած է Ատանայի ամբողջ նահանգն ու անոր սահմանակից Հալէպ Նահանգի կարգ մը շրջանները: Օսմանեան Հալէպ նահանգի, Հալէպ Գաւառի՝ Ալեքսանտրէթ Գաւառակի կեդրոն համանուն քաղաքը թէեւ ուղղակիօրէն չէ ենթարկուած կոտորածի, բայց եւ այնպէս նոյն գաւառակի կարգ մը գիւղեր զերծ չեն մնացած ջարդերէն եւ ունեցած են մարդկային ու նիւթական մեծ կորուստներ: Անոնք բաժնած են Ատանայի հայութեան վիճակուած ճակատագիրը, ինչպէս օրինակ՝ Գրըգխան գիւղը, որուն հայ բնակչութիւնը մեծամասնութեամբ կոտորուած է: Գաւառակի միւս ասաններուն մէջ պատահած են մասնակի սպանութիւններ, կողոպուտներ եւ ւերածութիւններ, որոնք բարեբախտաբար չեն վերածուած համընդհանուր կոտորածի:

Կիլիկեան Կոտորածներէն աւելի քան դար մը ետք, տակաւին անոր մասին չիրապարակուած եւ չուսումնասիրուած արխիւային հսկայ նիւթ կայ հայ թէ օտար դիւանատուններու մէջ: Կոտորածներուն վերաբերող անտիպ փաստաթուղթերու հաւաքածոյ մըն ալ կայ Բերիոյ Թեմի ազգային առաջնորդարանի դիւանատան մէջ, որմէ հրատարակութեան կու տանք Ալեքսանտրէթ Գաւառակի հայութեան վերաբերող երեք անտիպ փաստաթուղթեր: Ասոնք գրուած են Ալեքսանտրէթի առաջնորդական փոխանորդ Տէր Գրիգոր Քինյ. Մինասեանի կողմէ եւ կը նկարագրեն ոչ միայն գաւառակի հայաբնակ վայրերուն մէջ պատահած սպանութիւններն ու ւերածութիւնները, այլ նաեւ կը փոխանցեն վախի ու

սարսափի այն մթնոլորտը, որուն մէջ ապրած է տեղւոյն հայութիւնը կոտորածներու օրերուն: Առաջին երկու փաստաթուղթերը դէպքերուն մասին օրը օրին տրուած լրատուութիւններ են, իսկ երրորդը՝ Հալէպէն յղուած հարցարանի մը ամփոփ պատասխանը:

Առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ դրուող այս անտիպ նիւթերը նոր լոյս կը սփռեն ոչ միայն Ալեքսանտրէթի Գաւառակի հայութեան անցեալի մութ մնացած կարգ մը կարեւոր դրուագներուն վրայ, այլ նաեւ կ'ընդարձակեն Կիլիկեան Կոտորածներուն մասին մեր պատկերացումները, որովհետեւ այդ ջարդերուն նուիրուած հայերէն թէ օտարալեզու գրականութեան մէջ եւս բացակայ է Ալեքսանտրէթի Գաւառակը:

Փաստաթուղթերը հրատարակութեան կու տանք նոյնութեամբ, առանց որեւէ միջամտութեան, պահելով լեզուական եւ ուղղագրական անհարթութիւնները:

Փաստաթուղթերուն կցած ենք անհրաժեշտ ծանօթագրութիւններ, ուր սակայն առանձին-առանձին չենք նշած 1915ին այստեղ յիշատակուող բնակավայրերու հայութեան վերապահուած ճակատագիրը, որովհետեւ բոլորի պարագային ալ նոյնն է այն՝ աքսոր, կոտորած եւ Զինադադարին տասանորդուած վերապրողներու վերադարձ հայրենի տուն:

ԱԼԵՔՍԱՆՏՐԷԹ ՔԱՂԱՔՐ

Ալեքսանտրէթ կամ Իսքենտէրուն պատմական քաղաքը կը գտնուի Միջերկրականի հիւսիս-արեւելեան ափին, Հայոց Օրոցի վրայ: Կիլիկեան Հայոց Թագաւորութեան ժամանակ, ան շրջան մը մաս կազմած է հայկական պետութեան, իսկ ուշ միջնադարուն՝ եղած է Հալէպի գլխաւոր նաւահանգիստը:

1902ին ունեցած է 125 տուն հայ եւ 100-150 պանդուխտ քեսապցի բնուորներ: Տեղւոյն հայերը ունեցած են եկեղեցի մը եւ 60 մանչ ու 45 աղջիկ աշակերտներով զոյգ վարժարաններ¹: 1913ին քաղաքը ունեցած է 4500 հայ բնակիչ, Ս. Քառասուն Մանկունք եւ Ս. Իսաչ հայկական եկեղեցիները եւ 4 վարժարան²: Այլ աղբիւր մը՝ 1914ին տեղւոյն հայութեան թիւ նշած է 1950 անձ, որոնք ունեցած են Ս. Աստուածածին եկեղեցի եւ 150 աշակերտ ունեցող ազգային վարժարան: Ալեքսանտրէթ եւ մօտակայ Պէլլան Գաւառակները Ա. Աշխարհամարտի նախօրեակին ունեցած են 16 հայաբնակ օւաններ՝ մօտաւորապէս 14 հազար հայ բնակչութեամբ³: Ալեքսանտրէթի հայաբնակ գիւղերէն պիտի յիշել Նարկիզիկը կամ Ներկիզիկը, Աքչայը, Քըշլան կամ Քըշլա Տերէսին, Գարա Աղաճը, Ֆարթըսլըն, են.: Իսկ մօտակայ Պէլլան Գաւառակի հայաբնակ գիւղերէն՝ Աթըքը, Գրըգխանը, Գանլը Տերէն, Կէօզէլլին, Սովուք Օլուքը են.:

Համաշխարհային Առաջին Պատերազմի զինադադարէն ետք, կարճ ժամանակով, շրջանը գրաւած են անգլիացիք, ապա՝ ֆրանսացիք, իսկ

1920ին ան մտած է Սուրիոյ կազմին մէջ մինչեւ 1939, երբ ֆրանսեւորքական համաձայնագրով, ամբողջ գաւառակին հետ թոնակցուած է Թուրքիոյ:

Ա.

Իսկէնտէրուն, 24 [Ապրիլ]/7 Մայիս 1909

Գերապատիւ

Տ. Շահէ Վարդ. Գասպարեան⁴

փոխ-առաջնորդ Ս. հայր վիճակին Հալէպու

Հալէպ

Գերապատիւ Ս. հայր,

19/2 եւ 21/4 Մայիս թուեալ խնդրագրերս կը հաստատեմ որով կարեւորն ծանուցած էի:

Իսկէնտէրուն.- Տեղոյս ապահովութիւնը բաւական երաշխաւորեալ է, հետզհետէ զինուորներ կը հասնին եւ կը մեկնին այսր անդր: Երէկ Տէօրթ-Եօլ⁵ թափուր⁶ մը եւս գնաց թէ հոն մնալու կամ անցնելու համար չեմ գիտեր: Օսմ. զրահաւոր մ'ալ եկած է Համիտիյէ անուն որ երկու օր Փայաս⁷ եւ Տէօրթ-Եօլի առջեւ խարսխելով հոս վերադարձաւ, իտալական մարտանան ալ միեւնոյն շրջանը միեւնոյն կերպով ըրաւ կարծես հետապնդման ձեւի մը տակ: Կայ նաեւ ֆրանսական մարտանաւ մը, իսկ անգղիականն Սուէյտիյէ⁸ կ'երթայ հոն լեռները ապաստանողները փնտռելու եւ ժողովելու համար, մինչեւ ցարդ 1600ի մօտ հարս աղջիկ մանուկ էրիկ մարդ (քիչ) ժողոված է կ'ըսուի: Երէկ ֆրանս. հիւպատոսի պահանջման վրայ Նարկիզիք⁹ Ագչայ¹⁰ այրուած տները քանի ընտանիք ընդ ամէնն քանի հոգի անպատասպար (առանց տան) մնացողաց քանակը ուզեց եւ մատուցի, գումար 115 հոգի 18 ընտանիք եւ 37 տուն այրած են այս երկու տեղերու մէջ:

Պատճէնն ներփակ հեռագրոյն պատասխանը վիլայէթէն¹¹ հոս հրամայուած է, ինչ պարունակութեամբ կամ հարցասիրութեամբ եղած ըլլալը չեմք գիտեր, սա գիտեմք որ հեռագիր տուողները երէկի օր նեղեցին, երկար հարցաքննեցին բանի բերանոյ գրողն փնտռեցին եւ որովհետեւ նպաստից մասնաւոր զօմոսիօն¹² մը կազմուած է այդ հեռագիրը հոն փոխանցուած է, նոյն զօմոսիօնի մէջ մի հայ եւ մի յոյն կայ անոնց ցարդ տեղեկութիւն տուած չեն հեռագրի պարունակութենէն, անոնց ալ անկ եղածը խօսեցայ որ 'ի պահանջել հարկին անվախ գտնուին եւ անկ եղածը խօսելէ եւ գործադրել տալէ չը քաջուին, հոս ալ ինչպէս կը լսեմք Իթթիհատի ընկերութիւն մը կայ 38 անդամէ բաղկացեալ, ոչխարագլուխ գայմագամ¹³ մը, գատըն¹⁴, պելետիյէ ռէիսին¹⁵, մալմիտիրին¹⁶, գանձապետը, շէրիէ քեթիպին¹⁷ գլխաւորներն են, եւ արդէն մէճիսի իտարէին¹⁸ մէջ քրիստոնեայ անդամ չկայ, անոնք Կարապետ Քէշիշեան եւ Փեթթօ Ֆիլիպպին արդէն շատոնց մեկնած է,

ուրեմն մէջիսի իտարէ ըսելով միայն թուրք տարրը կայ, որուն մէկն ալ բարի լինելուն կարեւորութիւն չունի, այս մէջիսի իտարէին գլխաւոր ղեկավարն է պէլէտիյէ ռէիսին, Պէյազիտ էֆ. արդէն պաշտօնապէս արատաւորեալ եւ դատարանէ ատենին խստիւ մերժուած մի անձ, չեմ գիտեր վալի¹⁹ փաշան սորա եւ սոցա հանդէպ եղած բողոքանաց հակառակ կը սիրէ պահել իրեն պաշտօնին մէջ, եւ իանէ (նպաստից) զօմիսիոնի երեք-չորս թուրք սպաներն Իթթիհատի Մուհամմէտի²⁰ անդամներէն են, գործ ունիմք եւ որչափ որ կարելի է պիտի աշխատին տուներնին թալնուած խեղճ հայերը տուն վերադարձնել առանց անոնց բողոքներուն կարեւորութիւն տալով:

Ասկէրիյէ զօմանտանը²¹ երէկ կանչելով ինձ ըսաւ որ հիմա շիֆրէ²² հեռագիր ստացայ կոտորած եւ թալան ընող եւ սարքողները պիտի պատժուին խստիւ, եղած ղէպքերու մասին ինչ տեղեկութիւն որ ունիս թղթով մը ինձ գրէ, ուրիշի ալ յանձնարարեցի որ ընեն ըսաւ:

Կառավարութիւնը երկու օրէ 'ի վեր տուներնին թալնուած եւ կողոպտուածներուն երբեք բան չը տար (օրապահիկ) այլ միայն տներնին այրուողներուն կը տայ, դարձեալ մեր կողմանէ կը նայուին: Նարկիզլիկի մէջ առ ահի իսլամացած 16 հոգի կայ եւ գաղտագողի, խեղճերը հոս չեն գար վախնալով որ կ'սպաննուին եւ առ ահի ալ չեմք երթար կ'ըսեն, թէ եւ անցեալ օր վերադարձես յետոյ ոստիկան ղրկեցի դարձեալ չեկան առ ահի գիտեմ, ժամանակ ալ չ'ունիմ դարձեալ հոն երթալու:

42ի մօտ մարաշցի եւ ուլնեցի²³ ուխտաւորները ցարդ չը կրցանք ղրկել ճանապարհաց անապահովութեան պատճառաւ:

Տօրթ-Եօլ խաղաղ կ'երեւի բայց ապագան մութ է: Էրզինի²⁴ մութասարըֆը²⁵ տուներնին թալնուած եւ բոլորովին այրուելով դաշտ եղած նաճարըցիները²⁶ բռնութեամբ ղրկել կը ջանայ, տուն չկայ, անկողին չկայ, հաց չկայ, ո՛ր երթանքի ի պատասխան շրջակայ թրքերու տները գացք, հոս (Տօրթ-Եօլ) չը պիտի թողում զՁեզ ըսելով կը պնդէ, միայն իտալական մարտանաւուն Տօրթ-Եօլի առջեւ երեւմամբը մի քիչ կը կակղանայ: Այսօր լուր չ'առի ցարդ յուսամ խաղաղ են:

Պէլյան²⁷ խաղաղ է թէ երէկ վախի ծայներ կային տեղւոյն մէջ ալ երէկի օր սագըթցի գիւղէն երկու ժամ հեռաւորութեամբ թրքաբնակ գիւղի մը 9-10 թուրք կանայք կառավարութեան դիմելով շատ մը հայեր մեր գիւղի վրայ յարձակեցան եւ յարձակելու վրայ են ըսելով խուճապ ձգեցին, կառավարութիւնը յերուրանք ըլլալը հասկցաւ եւ առանց հարցուփորձի ետ խրկեցին, հեռագիր տուողները (մերայինք) կուսակալէն խստիւ կը հարցաքննուին, մինչդեռ ասանկ խուճապ ձգողները ծիծաղով մը կը ղրկեն:

Գըրըզիսան²⁸ եւ շրջակայքը սպաննուած են 110 հայ, որոնց տասի մօտը կին, 15 հոգի անյայտացած կամ բռնի թրքացուած: 437 հոգի անպատասպար խեղճ եւ օրական հացի կարօտ մնացած են: Պէլյան

քահանայ հոր²⁹ գրեցի որ ինձ տեղեկագիր դրկէ՝ մանրամասն հոս ինձմէ պահանջողներ կան, տեղույս մէջ թալնուած եւ այրուած տներու կահ կարասեաց, կենդանիք, գրաստ, արջառ, ոչխար եւ այլն առանձին մանրամասն իւրաքանչիւր տան հաշիւը պատրաստել տալով մասնաւոր տետրակի մէջ արձանագրել կ'աշխատիմ, վնասուց հաշիւ մը հանելու համար:

Ինձ վերադարձուած նամակներու գօրհան առնելով առանձին ծրարով մը այսօր յետս կը վերադարձնեմ:

Համբուրի Ս. Աջոյն հայրութեան, որոյ օրհնութեանց եմ յար կարօս
Գրիգոր Քհնյ. Մինասեան³⁰

Պելֆանթօ Գաթօնիին³¹ յանձնուած է դրամը օսմ. պանքայի կողմանէ, զի պանքան ինձ այսպէս հրահանգ տրուած է ըսաւ, անոնք ալ դրամ չտալ կ'ուզեն, այլ ալիւր եւ ուտելիք: Տեսնենք:

Յետ գր.: Երէկ հետեւեալ հեռագիրն ստացայ. “Église arménienne, Recovery ottombank 200 livres turcs pour Arméniens Dortyol et environs - Union Arménienne”³²:

Բ.

Իսկէնտէրուն Գազայի³³ պատկան գիւղերու մէջ սպանեալ հայերու անուանքն³⁴

Նարկիզլիք

1- Մահտեսի Գրիգոր Մարօնեան, տարիք 62: Սպաննիչք ներկիզլիկցի Ալիճան օղլու³⁵ Մօհամմէտ Ալիւշ, եղբայրը եւ ռէտիֆ զինուոր³⁶ Քէլ Օղլան Օղլու Ապտիւլահ եւ այլք:

2- Աւետիս Մարտիկով Էօրտէկեան, տարիք 23:

3- Յովսէփ Պօղոսով Էօրտէկեան, տարիք 25:

4- Գէորգ Սարգիս Էօրտէկեան, տարիք 22:

5- Միք[ա]լ Օղլու, տարիք 36:

Սպաննիչք.- Էմիր Օղլու Մօհամմէտ, Գուրտուշ Իպրահիմ Օղլու, Քէօսէ Օղլու Ահմէտ, գիւղաժողովի անդամ Մըսթըզ, Քէօր Ահմէտ, նաեւ 3 ռէտիֆ զինուորներ միասին գիւղէն քաղաք գալու ճանապարհին՝ Միք[ա]լ Օղլուն Ներկիզլիկի ստորոտը կամուրջի մօտ իսկ Աւետիսը Յովսէփը Գէորգը քրաղացքի մօտիկը կը յօշոտուին եւ դիակներն (վերջի երեքին) յօշոտեալ վիճակին մէջ բերել տալով թաղուած են, իսկ Միքայէլ Օղլուն անթաղ փճացած:

6- Պէլլանցի Սողմոն տարիք 19: Ներկիզլիկի պարտէզներու վերջացած ձորի մէջ բահով եւ ուրագով յօշոտուած: Սպաննիչը Էմիր

Մօհամմէտ Օղլու Ալի, թաղուած է զարնուած տեղւոյն մօտ, սպանման գործիք բաւով եւ ուրագովը:

Գարա Աղաճ³⁷

7- Սարգիս Գարապաճագեան, աթոռակալ³⁸ Պէլլանու, տարիք 42: Յիշեալը Գարա Աղաճ գիւղին մէջ գտնուած ագարակէն Իսկէնտէրուն գալու համար երկու ռէտիֆ գինուորներու եւ երեք ալ այլ անձանց ներկայութեամբ Պէրէքէթ Օղլու Սալէի Ճապուրի հետ 4 մէճիտի վարձքով՝ անվնաս Իսկէնտէրուն հասցնելու կը սակարկուի, եւ դրամն ալ գանձելով ճամբայ կը հանուի դէպ Իսկէնտէրուն, բայց ճամբան կը փճացուի անշուշտ յիշեալ Ճապուր Սալէի ոճրագործութեամբը:

8- Կօշկակար Պետրոս Պետոյեան, տարիք 55: Պէլլանի ճամբան յօշոտուած, սպաննիչը անձանօթ:

Ֆուրթըսլը³⁹

9- Մինաս Օղլու Յակովբ, տարիք 35:

10- Ասոր փեսան տարիք 25:

Ասոնք Ֆուրթըսլը գիւղէն Արաբ Տէրէսի⁴⁰ գիւղը գալու ճամբուն կ'սպաննուին, սպաննիչք Հովիտ⁴¹ գիւղացի Աֆթիյտ աղա Օղլու Ռէշիտ կը կարծուի:

Վերոգրեալ սպանեալներու սպաննիչք եւ նոյն գիւղերու մէջ գտնուող հայ բնակչութեան (Ներկիզլիկ, Գըշլա Տէրէսի⁴²) տներն թալանող եւ զոմանս ալ յետ թալանի այրող ոճրագործաց հետ բանտարկուած են եւ նախնական քննութիւնք առնուած:

Գ. Քինյ. Մինասեան

1909 Յունիս 2
յիսկէնտէրուն

Գ.

Իսկէնտէրուն 13 Յուլիս 1909

Հարցարան.

1. Կոտորածք, աւառարութիւնք, հրձգութիւնք ե՞րբ եւ որպիսի՞ պարագաներով տեղի ունեցան:

Պատասխանիք.

1909 Ապրիլ 2ի հինգշաբթի լոյս գիշերանց խուճապ մը տեղի կ'ունենայ, յանկարծակի գիշերանց ռէտիֆ զօրք ժողովելու նպատակի մը տակ, Ապրիլ 2ին տեղակալը ամէն տարրէ գլխաւորները կանչուեցան եւ խուճապը ռէտիֆ զօրք ժողովելու հանգամանքէն յառաջ եկած լինելը յետ բացատրութեան ժողովողեան յորդորներ կարդացին որ ոեւէ խռովութեան առիթ չտրուի, ամէն տարր իւր տգէտները յորդորելով եւ

խրատելով եւ իմամն⁴³ ու քահանայք ալ ճամիէն⁴⁴ եւ եկեղեցիէն խօսին ժողովրդաց խաղաղութեան պահպանման, արդէն այս յորդորականներու գաղտնի խորհուրդներու անտեղեակ եւ զարմանալի կը թուէր այն ատեն, յաջորդ օր Ապրիլ 3 ուրբաթ շրջակայ գիւղերէ թիւրք տարրը զինեալ քաղաքը կը գայ ինչպէս նաեւ շատեր ալ քաղաքի շուրջը պարտէզներու մէջերը եւ ետեւները՝ ՚ի թագստի կը մնան, եւ հրացաններու արծակման նշանի վրայ անոնք ալ միանալով քաղաքամիջի թիւրք խուժան գիւղացիներու հետ անխտիր թալանել այրել առեւանգել որոշած են բոլոր քրիստոնեայ տարրերը:

Միջօրէի աղօթքին միւֆթի⁴⁵ էֆ. ըստ իւր խոստման քարոզեց ժողովրդեան ազդեցիկ կերպով այնպէս որ համարձակութիւնը չ'ունեցան ոչինչ առնել եւ շատերը դժգոհ մնացին այս քարոզէն եւ խօսքեր հանեցին թէ՛ միւֆթի էֆ. կաշառք առած է հայերէն եւ յետմիջօրէին իրենց տեղերը մեկնեցան երեւակայական եւ երազական հաշիւներէ յուսահատ եւ սպաճըլցիներէն եւ ազայցիներէն (թըքաբնակ գիւղք) կը թալանեն իրենց ճանապարհաց վրայ գտնուած Ազայի հայաբնակ թաղի 8 տները Սեմին աղայինն ալ բռնկցնելով ու այրելով մինչ 8 տուն հայեր քաղաք կը հասնին ուղակի կամ տարբեր ճամբաներով:

Ապրիլ 4ին առաւօտուն կ'այրուին Ազայի մնացեալ եօթը տներն ալ մինչ երեկոյէն ոստիկան զինուոր դրկուած էր այրումէ պահպանութեան համար, սոյն աւուր մէջ կ'սպաննուին Ֆուրթըսլի հայ գիւղի բնիկներէն եւ ճանապարհի վրայ Թէմուրճեան Յակովբ եւ որդին Յարութիւն, սպաննիչք անձանօթ եւ կ'այրուին Գըշլա Տէրէսիի հայ բնակչութեան 12 տներէն 8 տներ յետ թալանէ, ինչպէս նաեւ Ներկիզլիկի գիւղէն ալ (խառն բնակչութեամբ) 4 հայոց տներ, մնացեալներն ալ թալանելով սոյն երկու տեղերու հայ բնակչութիւնը մազապործ արշալոյսի մօտ ինչպէս նաեւ Պէլլանի պատկան Սօուգ-Օլուգ⁴⁶ Կէօզէլի⁴⁷ հայ գիւղերու բնակչութիւնը մազապործ եւ վրայի զգեստներով հագիւ կը հասնին Իսկէնտէրուն գաղտագողի ճամբաներով, յաջորդ օր կ'սպաննուին Ներկիզլիկի մէջ մնացողներէն Գրիգոր Մարօնեան եւ պէլլանցի Սողոմոն, իսկ Ներկիզլիկէն միասին մեկնող 3 ռէտիֆ զօրքերով եւ Էմին Օլլու Մահմտ, Գուրտուշ, Քէօսէ Ահմէտ եւ Մըպթըզով քաղաքի ճամբուն վրայ եւ կամուրջի մօտ Միքայէլեան Միքայէլ եւ ջրաղացքի մօտ ալ Աւետիս Մարտիկով եւ Յովսէփ Պողոսով եւ Գէորգ Սարգիսով էօրտէկեանք կը զարնուին եւ կը յօշոտուին, սոցա սպաննիչները միասին եկողները լինելու են եւ են արդէն: Յետ մի քանի աւուրց կը կորսուի նոյն ջրաղացքի տէր պէլլանցի Գարապաճագեան Սարգիս աղան որ 45 թիւրք անձանց ներկայութեամբ եւ վկայութեամբ եւ 4 արծաթ մէճիտ վարձքով անվնաս Իսկէնտէրուն յանձնուելու պայմանաւ ճապպոր Սալէմով ճամբայ ելած էր, անշուշտ սա ալ Սալէմ ճապպորով եւ համախոհներովը կը փճացուի,

Սարգոյի ձին եւ վրայի դրամներն իւրացնելու համար որ 150 ոսկոյ գումար մ'է կ'ըսուի:

2. Այս խժոժութեանց թելադրիչք որո՞նք էին, քանի՞ն ձերբակալուած են, անոնց նկատմամբ ի՞նչ տնօրինութիւն եղած է եւ ո՞րք ոմանք ազատ կը մնան:

Թելադրիչները քաղաքամիջի յետադիմական ազդեցիկներէ եւ կառավարութեան մէջ բարձր պաշտօն վարող անձինքներն լինելը կը խօսուի, բայց ոճրագործք թելադրիչներու անունները չեն տար թելադրուելով թելադրիչներէ եւ միայն ծեծով կարելի է խոստովա[ն]ցնել տալ այն ալ Էօրֆիէն⁴⁸ չ'ըներ, ընելու հրաման չունի կ'ըսեն եւ այս յայտնի է զի այսչափ տարիներ միասին ապրող ժողովուրդ մը միանգամայն տգէտ եւ մոլեռանդ ինքնաբերաբար այսպէս խժոժութիւններ, թալաններ եւ հրձիգութիւններ չ'ըներ, երբ իւր մոլեռանդութիւնը գրգռողներ եւ թալանի բնականապէս հակամէտ խուժանի մը ճաշակը սրողներ չը լինին:

3. Ո՞րքան է զոհերու թիւը բնիկ եւ ուրիշ գաւառներէ եկողները, այր եւ կին, մանկտի նշանակելով զատ զատ:

Իսկէնտէրունի հայ բնիկներէն Այասի⁴⁹ մէջ (Ատանալիի պատկան) սպաննուած են Մատթէոս էֆ. Պալեան եւ Յարութիւն Սարաֆեան, իսկ Ատանալիի մէջ 18 ամեայ Իսկէնտէրունցի Մարտիրոս Սարգիսով Մարտիկեան պատանին: Ներկիզիկի (Իսկէնտէրունի պատկան) գիւղէն 6 այր, Ֆարթըսլը գիւղէն 2 այր, պէլլանցի ըլլալով 2 այր (մին Սարգիս Գարապաճագեան եւ միան քեօշկեր⁵⁰ Պետրոս), որով Իսկէնտէրունի կորուստը կը լինի 13 այր:

4. Ո՞րքան վիրաւորեալներ կան:
Կէօզէլի գիւղէն Գէորգ Կիւզէլ Արոյեան որ ցարդ հիւանդ է եւ օրֆացի⁵¹ Յարութիւն որ ապաքինած է:

5. Ո՞րքանի կը յանգի ընդհանուր կարօտելոց թիւը իւրաքանչիւր արկածեալ վայրեր զատ զատ նշանակելով:

Ներկիզիկ գիւղէն	53 անձ
Ազչայէն	37 անձ
Գըշլա Տէրէսիէն	28 անձ
Ֆարթըսլըլէն	5 անձ
Այասէն	18 անձ
Պէլլանի պատկան Կէօզէլիէն	11 անձ 152
Զանազան տեղերէ	22 անձ
	22 }=174

6. Ո՞րչափ որբ ունինք արու եւ էգ զատ զատ, ո՞րքանը մեր քով եւ ո՞րքանը ուրիշներու մօտ կը մնան:

Այասէն որբ 7 տղայ 6 աղջիկ

Ներկիզվիկէն որբ 2 տղայ 5 աղջիկ

Այասէն եղողներէն Ամերիկեան Սաղմոսական երէց Քէնէտի⁵² կողմանէ 4 տղայ երեք աղջիկը Անթապ եւ Պէյրուֆ դպրոցները դրկուեցան, իսկ մնացեալ[ք] կը մնան իրենց ծնողաց մօտ:

7. Ո՞րքան է առեանգեալ կանանց եւ աղջկանց թիւը եայլն:

Իսկէնտէրուն եւ շրջակայք առեանգումներ եայլն չեղան:

8. Ո՞րքան եւ ի՞նչ տեսակ շէնքեր հրկիզուած են:

Այրուած շէնքերն են գիւղական տներ, մեծի մասամբ քարաշէն եւ երկյարկ յարակից շերամատներով, մարագներով եւ ախոռներով: Գըշլա Տէրէսի, Ներկիզվիկի, Ազգայի այրուած տանց ընդհանուր արժէքը կը հասնի 900 ոսկւոյ:

9. Զարդէ ճողոպող եւ այլուր ապաստանողաց թիւը քանի՞ է:

Իսկէնտէրունի պատկան հայ բնակչութենէ Աղեքսանդրիա եւ Կիպրոս խոյս տուողներու քանակը 250-300 ի մէջն էր, հետզհետէ կը վերադառնան:

10. Ո՞րքան է ժողովրդեան նիւթական եւ դրամական կորուստներու քանակը:

Միջին հաշուով թալան կորուստ եւ այլն 4000-5000 ոսկւոյ մէջն է:

11. Ո՞րքան ազգային հաստատութիւնք եւ նոցա հասութաբեր կալուածք փճացան եւ ո՞րչափ է անոնց նիւթական վնասն:

Իսկէնտէրուն եւ շրջակայքը ազգային եւ եկեղեցական շէնքեր չայրեցան ինչպէս նաեւ հասութաբեր կալուածներ որ արդէն չկայ: Անապահովութեան առթիւ գործերու գէշ ընթացքը արդէն պիտի վնասէ բարոյապէս եւ նիւթապէս քաղաքիս հասարակութեանը որոց քանակը որոշել անկարելի է (մանաւանդ հայ տարրը):

11⁵³. Կառավարութեան կողմանէ ի՞նչ միջոցներ ձեռք առնուած են կողոպուտներն տերանց դարձնելու եւ ցարդ ո՞րքան եւ որոց դարձուած են:

Մինչ ցարդ ոչինչ չըրաւ եւ հակառակ որ Հիյէթը Էօրֆիյէ մը կայ տեղւոյս մէջ, այսօր մէկ ամսոյ մօտ է որ կը գործէ, բայց ոչինչ [ըրաւ], թէեւ կանխաւ այս առթիւ ալ բողոքուեցաւ, դարձեալ նոյն է եւ կողոպուտներէ ոչինչ եկած են մինչդեռ կողոպտողք շրջակայ եւ ծանօթ գիւղացիք են:

12. Կառավարութենէ նաեւ օտար մարդասէրներէ նիւթական ո՞րքան նպաստ տրուած է հայ կարօտելոց եւ ի՞նչ եղանակաւ:

Դէպքերու առջի ատենները տեղւոյս մէջ ապաստանողաց 800-900 մօտ անձանց եկեղեցիներ հայթայթեց հացագին 13 օր, յետ որոյ Եւրոպայի պաշտօնական տներ խնամքէն մաս մը առին, կառավարութիւնն ալ միայն տներն այրածներուն եւ (Իսկէնտէրունի պատկան) անձանց օրական 6-ական մեթալիկ⁵⁴ հացագին տալ սկսաւ մերժելով միւս ապաստանողներու խնամելու հոգը, Հալէպ Առաջնորդարանէ, Եգիպտոս Հայ Բարեգործական Ընկերութենէ եւ Պատրիարքարանէ եւ ի վերջոյ հիմա ալ Նպաստից Միջազգային Յանձնաժողովոյ⁵⁵ կողմանէ հացագին կը տրուի կարօտելոց, կառավարութիւնը այս օրեր մերժեց նաեւ տներն այրուողներուն ինչպէս սպաննուածներու այրի եւ որբերուն խնամելու հոգը:

1909 Յուլիս 13/26

Իսկէնտէրուն

Աղօթարար

Գրիգոր Քինյ. Մինասեան

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Միհրան Մինասեան, «Պատմական Անտիպ Տեղեկագիր մը Բերիոյ (Հալէպի) Թեմի Հայութեան Մասին», *Բանբեր Հայաստանի Արխիւների*, Երեւան, թիւ 1-2 (109-110), 2007, էջ 23:

² Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Ա., Երեւան, ԵՊՀ Հրատ., 1986, էջ 75:

³ Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire Ottoman a la Veille du Génocide*, Հրատ.՝ ARHIS, Փարիզ, 1992, էջ 350, 63:

⁴ Շահէ Վարդ. Գասպարեան (Այնթապ, 1882-Հայաստան, 1935): Ան արմաշական է, 1908-11՝ վարած է Հալէպի առաջնորդական տեղապահի պաշտօնը, 1911-13՝ եղած է Ատանայի առաջնորդ, 1917-30՝ Պոսթօնի հոգեւոր հովիւ, 1930-35՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանոց տեսուչ (*Պատմութիւն Անթէպի Հայոց*, Ա. Հտր., աշխ. ու խմբ.՝ Գէորգ Ա. Սարաֆեան, Հրատ.՝ Ամերիկաբնակ Այնթապցիներու Միութեան, Լոս Անճելըս, Սենթրըլ Թայփսթիինկ, 1953, էջ 403-7):

⁵ Հայկական անուանումով՝ Չորք Մարզպան: Հայաբնակ քաղաք Ատանա Նահանգի Եարփուզ (Ճեպէլ Պերեքէթ) Գաւառի Չորք Մարզպան Գաւառակի կեդրոնը, Ատանայէն հարաւ-արեւելք, Սեւ Լեռներու փէշերուն:

Քաղաքը ունեցած է Ս. Աստուածածին եւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ (Ս. Փրկիչ) եկեղեցիներն ու Ս. Սարգիս վանքը, ինչպէս նաեւ անտարանական համայնքի մէկ եկեղեցի եւ երկու վարժարան, նաեւ՝ երկյարկ Կեդրոնական Վարժարան եւ Կիլիկիոյ կոտորածներու որբերուն համար հաստատուած Սիսուան եւ Քելէկեան որբանոցները:

Տեղւոյն հայերը, 1895ի Համիտեան Կոտորածներուն, ութօրեայ ինքնապաշտպանական մարտերու շնորհիւ, փրկուած են կոտորածէ: Նոյնը

պատահած է նաեւ 1909ին, երբ անոնք 13օրեայ դիմադրութենէ ետք, համեմատաբար քիչ կորուստներ տալով փրկուած են համընդհանուր ջարդէն: Սակայն թուրքեր յաջողած են հրկիզել հայերու հարիրաւոր տուններ ու ամառանոցներ: 1912ին ան ունեցած է հազար տուն զուտ հայ բնակչութիւն, որուն 20ը՝ անտարանականներ, մնացեալները առաքելականներ (*Տեղեկագիր Այրիսիսնամ Յանձնաժողովի 1910 Սեպտ. 11-1912 Սեպտ. 11. Յաւելուած Տեղեկագիր Քննիչ-Պարտիրակ Պ. Ժագ Սայապալեանի*, Կ. Պոլիս, Տպ. Շանթ, 1912⁶, Սայապալեանի Տեղեկագիրը, էջ 57), իսկ Յեղասպանութեան նախօրեակին ունեցած է 12,300 հայ բնակիչ (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Քախչեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից... Հտր. Բ.*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 1988, էջ 140):

⁶ Օսմանեան բանակի ստորաբաժանումներէն, որ բաղկացած կ'ըլլար 100 զինուորէ:

⁷ Փայաս՝ պատմական կարեւոր նաւահանգիստ Միջերկրականի ափին, Հայոց Ծոցի հիւսիս-արեւելքը: Միջնադարուն եղած է վաճառաշահ մեծ կեդրոն արեւելքի ու արեւմուտքի միջեւ, մանաւանդ՝ ԺԳ.-ԺԴ. դարերուն, Կիլիկիոյ Հայկական Թագաւորութեան շրջանին. արելի ետք անշքանալով՝ վերածուած է աւանի, որ 1903ին ունեցած է շուրջ 6000 բնակիչ, որուն կէտը՝ հայեր, իսկ միւս կէտը թուրքեր էին (Հ. Ս. Էփրիկեան, *Պարկերագարդ Բնաշխարհիկ Բառարան*, Ա. Հտր., Բ. տիպ, Վենետիկ-Ս. Ղազար, 1903, էջ 397-398):

⁸ Սուեիս, ծանօթ է նաեւ Մուսա Լեռ անունով: Գիւղախումբ Հալէպի Նահանգի Հալէպ Գաւառի Անտիոք Գաւառակին մէջ, Միջերկրականի արեւելեան ափերուն, Քեսապէն հիւսիս-արեւմուտք: Ունեցած է հայաբնակ վեց գիւղ, որոնք 1911ին միասնաբար ունեցած են 1338 հայ տուն՝ 6283 բնակիչ (Գրիգոր Տունկեան, *Նիւթեր Լաթաքիոյ եւ Շրջակայքի Հայ Ազգաբնակչութեան Պարմութեան*, Հրատ. Բերիոյ Թեմի Ազգային Առաջնորդարանի, Հալէպ, Տպ. Շարք, 1983, էջ 35):

Սուեիսայի շրջակայ հայաբնակ գիւղերը մարդկային եւ նիւթական մեծ կորուստներ ունեցած են 1909ին, բայց 1915ին, անտեսելով իրենց բնակավայրերէն հեռանալու կառավարական հրահանգը, բարձրացած են լեռ եւ ամբողջ 53 օր դիմադրելով ու մարդկային նուազագոյն զոհեր տալով՝ ֆրանսական ռազմանաւերով տեղափոխուած են Փոր Սայիտ՝ Եգիպտոս, ու փրկուած համընդհանուր կոտորածէն:

Զինադադարին անոնք վերադարձած են հայրենի տուն ու կրկին շէնցուցած զայն: Շրջանը, 1939ի ֆրանսեւթուրք համաձայնագրով, Սուրիայէն խլուելով բռնակցուած է Թուրքիոյ, որուն հետեանքով տեղւոյն հայերը մեծամասնութեամբ հեռացած են անկէ եւ ապաստանած Լիբանան, ուր հիմնած են Այնճար հայաւանը:

⁹ Նարկիզլիք՝ հայաբնակ գիւղ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Պէլլան Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքի մօտակայքը, Ամանոս Լեռան փէշերուն, Սոււզ Օլուզ եւ Կիւզէլլի գիւղերէն քսանական վայրկեան հեռաւորութեան վրայ: 1902ին վերոյիշեալ զոյգ գիւղերուն հետ միասնաբար ունեցած է 45 հայ տուն (Մինասեան, էջ 23, 29): Այլ աղբիւրի համաձայն, 1914ին ան ունեցած է 180 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 350): 1909ին թուրքեր

թալանած են գիւղը, բնակիչներէն սպաննած են 6 հայեր եւ այրած հայերու պատկանող նոյնքան տուներ (Յակոբ Յ. Թերզեան, *Կիլիկիոյ Աղէտը*, Կ. Պոլիս, Տպգր. Յ. Ասատուրեան եւ Որդիք, 1912, էջ 267):

¹⁰ Աքչայ՝ հայաբնակ գիւղ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքէն արեւելք (*Հայաստանի եւ Յարակից... Ա. Հտր.*, էջ 143): 1909ին թուրքեր Ագչայի մէջ այրած են հայերու պատկանող 18 տուներ (Թերզեան, էջ 267):

¹¹ Վիլայէթ՝ նահանգ, հոս՝ նահանգապետութիւն:

¹² Ֆրանսերէն՝ յանձնաժողով:

¹³ Արաբերէնէ՛ փոխառեալ թրքերէն՝ գաւառակի կառավարիչ, գաւառակապետ:

¹⁴ Արաբերէնէ՛ փոխառեալ թրքերէն՝ դատարար:

¹⁵ Թաղապետութեան նախագահ: Կը կոչուէր Պէյազիտ էֆ., ինչպէս պիտի տեսնենք աւելի վար:

¹⁶ Արաբերէնէ՛ փոխառեալ թրքերէն՝ գաւառի հաշուակալ:

¹⁷ Շերիի՛ իսլամական դատարանի գրագիր, քարտուղար:

¹⁸ Արաբերէնէ՛ փոխառեալ թրքերէն՝ վարչական ժողով:

¹⁹ Արաբերէն՝ նահանգապետ: Նոյն թուականին Հալէպի նահանգապետն էր Ռաշիտ Պէյը, որ պաշտօնը ստանձնած էր 5 Հոկտեմբեր 1908ին ու շարունակած՝ մինչեւ 1909ի Սեպտեմբերի վերջերը, երբ հալէպցիներու բողոքներուն վրայ պաշտօնանկ եղած է (محمد فؤاد عنتابي ونجوى عثمان, *1950-1850 حلب في مئة عام*, Բ., Հալէպ, 1993, էջ 71, 79):

²⁰ Բառացիորէն Մուհամմէտեան՝ Իսլամական Միութիւն:

²¹ Զինուորական հրամանատար:

²² Ծածկագիր:

²³ Նկատի ունի Զէյթուն ասանը:

²⁴ Էրզին՝ գիւղ Ատանա Նահանգի Եարփուզ Գաւառի Էրզին Գաւառակի կեդրոնը, Ատանա քաղաքէն հարաւ-արեւելք: ԺԹ. դարակիսուն հայաբնակ էր եւ մօտակայ Պաղչէ, Էյալէզ, Եուզէրլիք, Չորք Մարզպան եւ Օճաքլը ասաններուն հետ միասնաբար ունեցած է 1200 հայ տուն (*Հայաստանի եւ Յարակից... Բ. Հտր.*, էջ 365), բայց աւելի ետք հայաթափուած է ամբողջութեամբ: Կիլիկեան Կոտորածներուն, գիւղին մէջ սպաննուած են այլ վայրերէ՛ հոն աշխատանքի եկած հայեր:

²⁵ Կը կոչուէր Նուրէտտին (*Հրաչիկ Սիմոնեան, Հայերի Զանգուածային Կոտորածները Կիլիկիայում (1909 Թ. Ապրիլ)*, Երեւան, ԵՊՀ Հրատ., 2009, էջ 123):

²⁶ Նաճարլը՝ զուտ հայաբնակ գիւղ Ատանա Նահանգի Եարփուզ Գաւառին մէջ, Չորք Մարզպանէն հիւսիս-արեւմուտք, 7 ժամ հեռավորութեան վրայ: Ունեցած է եկեղեցի եւ վարժարան: Ի. դարասկզբին ունեցած է 750 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 304), իսկ Կիլիկեան Կոտորածներու նախօրեակին՝ մօտ 100 տուն: Նոյն դէպքին, նաճարլըցիներ կարճ դիմադրութենէ՛ ետք, ապաստանած են Չորք Մարզպան եւ այնուհետեւ 10-12 ընտանիքներ միայն վերադարձած են գիւղ, որ ամբողջութեամբ անբնակ էր թուրքերու կողմէ, մինչ անոր բնակիչները մնայուն կայք հաստատած են Չորք Մարզպանի մէջ (*Տեղեկագիր Այրիսիւնամ...*, Սայապալեանի Տեղեկագիրը, էջ 59): Կոտորածներուն

հետեւանքով գիւղը ունեցած է հայ առաքելական համայնքի 10 որբ (Կիլիկիոյ Որբախնամ Կեդր. Յանձնաժողով, *Տեղեկագիր 1909 Օգոստոս 7-1910 Դեկտեմբեր 31*, Կ. Պոլիս, Տպ. Օ. Արզուման, 1911, էջ 74):

²⁷ Պէլլան՝ գիւղաքաղաք Կիլիկիոյ մէջ, Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Պէլլան Գաւառակին կեդրոնը, Ալեքսանտրէթ Քաղաքէն 13 քմ. հարաւ-արեւելք հեռաւորութեան վրայ: Աւանը ունեցած է Ս. Սարգիս եւ Ս. Աստուածածին անունով հայ առաքելական զոյգ եկեղեցիներ: Հայ կաթօլիկ եւ ւաւետարանական համայնքները եւս ունեցած են իրենց եկեղեցիներն ու դպրոցները: Կիլիկեան Կոտորածներուն հետեւանքով տեղւոյն հայերը ունեցած են 62 առաքելական համայնքի, 3 ւաւետարանական եւ 2 կաթօլիկ որբեր (*Տեղեկագիր 1909...*, էջ 89, 94, 95):

Տեղասպանութեան նախօրեակին ան ունեցած է 1791 հայ բնակիչ իսկ անոր ազգային վարժարանը՝ 180 աշակերտ (Kévorkian-Paboudjian, էջ 350): Զինադադարին, հայրենի աւան վերադարձած են մօտ 600 վերապրողներ ու վերաբացած են դպրոց ու եկեղեցի:

²⁸ Գրըզխան՝ հայաբնակ գիւղ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքէն հարաւ-արեւելք: Կիլիկեան Կոտորածներէն առաջ ունեցած է 80 տուն հայ եւ հագի 30 տուն իսլամ բնակչութիւն: Զարդէն քանի մը տարի առաջ հոն վերաբնակեցուած են 25 տուն իսլամ: Կիլիկեան Կոտորածները ամբողջութեամբ շրջած են գիւղին ժողովրդագրական պատկերը եւ 1912ին, տեղւոյն իսլամներու 80 տունին դիմաց՝ մնացած է հայերու հագի 30 տուն (*Տեղեկագիր Այրիախնամ...*, Սայապալեանի Տեղեկագիրը, էջ 5): Կիլիկեան Կոտորածներուն, գիւղը տուած է 93 զոհ (Թերզեան, էջ 267), որոնք իրեց ետին ձգած են 88 հայ առաքելական, 7 ւաւետարանական եւ 10 կաթօլիկ համայնքի որբեր (*Տեղեկագիր 1909...*, էջ 89, 94-95), իսկ 1914ին՝ ունեցած է 176 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 351):

²⁹ 1909ին Պէլլանի քահանան էր Տէր Վահան Մանուկեան (Հաճըն, 1844-Պապ, 1915): Որպէս ուսուցիչ՝ դասաւանդած է Պոլիս, Այնթապ, ապա 18 տարի՝ Հաճընի Միացեալ Ընկերութեան Ճեմարանը, ապա՝ Տարսոն ու Չորք Մարզպան: Քահանայ ձեռնադրուելով քանի մը տարի վարած է Հաճընի առաջնորդական փոխանորդի պաշտօնը: Քաղաքական ամբաստանութեամբ աքսորուած է Ադրիանապոլիս, ապա նշանակուած է Ալեքսանտրէթի ու Պէլլանի առաջնորդական փոխանորդ եւ չորս տարի ետք՝ վերադարձած Հաճըն: 1915ին աքսորուած է Հալէպ, հոնկէ՝ Պապ, ուր եւ վախճանած է (Յակոբ Պ. Պողոսեան, *Հաճընի Ընդհանուր Պատմութիւնը եւ Շրջակայ Գօզան-Տարի Հայ Գիւղերը*, Լոս Անճելըս, Տպգր. Պօզաճեան, 1942, էջ 362-364):

³⁰ Յիշուած է նաեւ Պողոսեան մականունով (Զմշկածագ, 1860-Ալեքսանտրէթ, 1938), հետեւած է Երուսաղէմի Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարանի դասընթացքներուն: 1889ին մտած է ուսուցչական ասպարէզ, 1903ին ձեռնադրուած է Ալեքսանտրէթի քահանայ, 1915ին աքսորուած Հալէպ, ապա՝ սուրիական անապատ: Զինադադարէն ետք վերադարձած է Ալեքսանտրէթ եւ շարունակած վարել տեղւոյն առաջնորդական փոխանորդի պաշտօնը (*Պատմագիրը Զմշկածագի*, դասաւորեց եւ խմբ.՝ Հայկազն Գ. Ղազարեան, Հրատ. Զմշկածագի Հայրենակցական Միութեան, Պէյրութ, Տպ.

«Համազգային», 1971, էջ 523-4. նաեւ՝ Յուսիկ Քհնյ. Սեդրակեան, «Գրիգոր Քհնյ. Մինասեան», *Գանձասար*, Հալէպ, Ապրիլ Բ. 2008):

³¹ Ծովային ընկերութիւն որ գրասենեակներ ունեցած է արեւելքի բազմաթիւ քաղաքներու մէջ:

³² Հատուածը ֆրանսերէն է ու կը թարգմանուի այսպէս. «*Հայոց եկեղեցի-Օսմանեան Դրամատրուինէն ստանալ 200 օսմ. ոսկի Տէօրթ Եոյի եւ շրջակայքի հայութեան համար- Հայկական Միութիւն (նկարի ունի ՀԲԸՄը – Մ.Մ.)*»:

³³ Գագա՝ գաւառակ: Իսքենտէրունի կամ Ալեքսանտրէթի Գաւառակը կը գտնուէր Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառին մէջ, դաշտային Կիլիկիոյ տարածքին, Միջերկրականի հիւսիս-արեւելեան անկիւնը, Հայոց Ծոցին վրայ: Տարածութիւնը շուրջ 5000 քառ. քիլոմէթր էր: Կեդրոնը՝ համանուն քաղաքն էր:

³⁴ Հոս տրուած Նարկիզիքի, Գարա Աղաճի եւ Ֆուրթըսըլը-Ֆարթըսըլի զոհերուն թիւը (յաջորդաբար 6, 2 եւ 2) կը համապատասխանէ Թերզեանի տուած թիւերուն, զորս իրեն տրամադրած էր Հալէպի առաջնորդական փոխանորդ Շահէ Ծ. Վրդ. Գասպարեանը (Թերզեան, էջ 267):

³⁵ Օղլու կամ օլլի, թրքերէնով՝ որդի:

³⁶ Արաբերէն՝ պահեստի զինուոր:

³⁷ Գիւղ՝ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքէն հարաւ-արեւմուտք:

³⁸ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերուն ենթակայ հայաշատ քաղաքներու կաթողիկոսարանի աշխարհական ներկայացուցիչը, որ ընդհանրապէս կը զբաղէր կաթողիկոսութեան նիւթական եկամուտներու ապահովումով եւ իր իրաւասութիւններու ոլորտով կը յիշեցնէր ուշ միջնադարուն լայն տարածում գտած եկեղեցական նուիրակները:

³⁹ Կամ Ֆարթըսըլը: Հայաբնակ գիւղ՝ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքէն հարաւ-արեւմուտք: 1914ին ունեցած է 200 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 350):

⁴⁰ Արաբ Տերէսի՝ գիւղ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ:

⁴¹ Հովիտ՝ գիւղ Ամանոսեան Լեռներուն հիւսիս-արեւելքը:

⁴² Գըշլա Տերէսի՝ գիւղ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ալեքսանտրէթ Գաւառակին մէջ, Ալեքսանտրէթ Քաղաքէն հարաւ-արեւմուտք: 1914ին ունեցած է 60 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 353):

⁴³ Մահմետական կրօնաւոր առաջնորդ:

⁴⁴ Արաբերէն՝ մզկիթ:

⁴⁵ Իսլամական օրէնքներու սկզբունքներուն հիմամբ վճռատու իսլամ կրօնաւոր:

⁴⁶ Սովոք Օլոք՝ հայաբնակ գիւղ ու ծանօթ ամառանոց Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Պէլլան Գաւառակին մէջ, Ամանոս Լեռան փեշերուն, Պէլլանէն հարաւ-արեւմուտք, Կիլիզիի եւ Նարկիզիք գիւղերէն քսանական վայրկեան հեռաւորութեան վրայ: 1914ին ունեցած է 174 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 351). այլ աղբիւրի մը համաձայն, 1915ին ունեցած է 350 հայ բնակիչ (Թ. Խ. Յակոբեան, Ստեփան Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, *Հայաստանի եւ Յարակից Շրջանների Տեղանունների Բառարան*, Դ., Հտր., Երեւան, ԵՊՀ Հրատ., 1998, էջ 668):

⁴⁷ Կեօզէլի՝ հայաբնակ գիւղ Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Պէլյան Գաւառակին մէջ, Ամանոս Լեռան փէշերուն, Ալեքսանտրէթ Քաղաքէն հիւսիս-արեւելք: 1914ին ունեցած է 121 հայ բնակիչ (Kévorkian-Paboudjian, էջ 355):

⁴⁸ Պատերազմական ատեան:

⁴⁹ Այսա՝ պատմական կարեւոր նաւահանգիստ Միջերկրականի ափին, Հայոց Ծոցի հիւսիս-արեւմուտքը: Միջնադարուն եղած է վաճառաշահ մեծ կեդրոն արեւելքի ու արեւմուտքի միջեւ, մանաւանդ՝ ԺԳ.-ԺԴ. դարերուն, Կիլիկիոյ Հայկական Թագաւորութեան շրջանին. աւելի ետք, անշքանալով, վերածուած է աւանի: 20րդ դարասկզբին ունեցած է 5000 բնակիչ, որուն 2000ը հայեր էին: Ունեցած է Ս. Սարգիս եւ Ս. Ստեփանոս եկեղեցիներն ու ազգային վարժարան մը (*Հայաստանի եւ Յարակից... Ա. Հար.*, էջ 224):

⁵⁰ Թրքերէն՝ կօշկակար:

⁵¹ Հաւանաբար նկատի ունի Օրֆալիէ գիւղը, որ կը գտնուէր Հալէպ Նահանգի Հալէպ Գաւառի Ճըսըր Շղուր Գաւառակին մէջ: 1902ին ունեցած է 15 տուն հայ եւ թուրք խառն բնակչութիւն: Տեղւոյն հայերը եկեղեցի եւ դպրոց չեն ունեցած (Մինասեան, էջ 24), իսկ 1911ին ունեցած է 23 հայ տուն՝ 118 բնակիչ (Տունկեան, էջ 35): Հայոց Տեղասպանութեան զոհ գացած է գիւղի բնակչութեան մօտ երկու երրորդը: Վերապրողներ վերադարձած են հայրենի գիւղ: Այդ շրջանին գիւղը ունեցած է իր դպրոցը՝ Ազգային Մեսրոպեան Վարժարանը (Յակոբ Չօլաքեան, *Անպիտակ Մերձակայ Ռուճի Հովիտի Հայերը*, Հրատ.՝ Ռիչըրտ եւ Թինա Գարօլան Հիմանդրամ, թիւ 2, Անթիլիաս, ՏԿՎՄՏԿ, 2006, էջ 165):

⁵² Ամերիկացի երէց: Կիլիկեան Կոտորածներու ընթացքին իր տան մէջ ապաստան տուած է աւելի քան 200 հայերու եւ փրկած անոնց կեանքը, իսկ Չորք Մարզպանի հայերու ինքնապաշտպանական մարտերու միջոցին, երբ քաղաքը պաշարուած է թուրք ամբոխէն, Քենետի՝ 500 օսմանցի զինուորներու ընկերակցութեամբ, եւ որպէս ներկայացուցիչ Ալեքսանտրէթի 4 հիւպատոսներուն, մտած է քաղաք եւ գերմարդկային ճիգերով կրցած է միջնորդել, քակել տալ պաշարումը եւ ցրուել հազարներու հասնող խուժանը՝ առանց հայերը զինաթափ ընելու նախապայմանին: Քենետի Չորք Մարզպան մնացած է մինչեւ քաղաքին մէջ վերջնական անդորրի հաստատումը (Արշակունի Թէոդիկ, *Ամիս Մը 'Ի Կիլիկիա*, Կ. Պոլիս, Տպգր. Վ. եւ Հ. Տէր Ներսէսեան, 1910, էջ 188. նաեւ՝ Թերզեան, էջ 332):

⁵³ Բնագրին մէջ թիւ 11ը կրկնուած է:

⁵⁴ Օսմանեան շրջանի արծաթապատ պղնձեայ դրամ, տասնոց:

⁵⁵ Կազմուած է Պոլսոյ մէջ, Կիլիկեան Կոտորածներէն անմիջապէս ետք, սուլթան Մուհամմէտ Խան Ե. Ռեշատի հովանաւորութեամբ, աղէտեալներուն նպաստ հասցնելու նպատակով:

Յանձնաժողովը արկածեալ գլխաւոր քաղաքներուն մէջ ունեցած է իր ներկայացուցիչները, որոնք միշտ եղած են օտարահպատակներ, ինչպէս որ էր Պոլսոյ կեդրոնական մարմնի անդամներու մեծամասնութիւնը: Կեդրոնական մարմնի նախագահն էր՝ Ծերակոյտի նախագահ Սաիտ փաշան, դեր-նախագահը՝ Օսմանեան Դրամատան տնօրէն՝ Մ. Տեֆէսը, գանձապահ՝ Եդուարդ Գարակէօզեանը, ատենադպիր՝ Գրիգոր Սինապեանը: Յանձնաժողովը ունէր երկու մասնախումբեր, որոնցմէ առաջինին

պարտականութիւնն էր արտասահմանէն նպաստներ հաւաքել, եւ զոր կը նախագահէր Մ. Հիւկէն, իսկ երկրորդին պարտականութիւնն էր հաւաքուած գումարները հասցնել արկածեալներուն, եւ զոր կը նախագահէր Մր. Փիթ:

**Unpublished Documents about the Condition of Armenians in Alexandretta
Province During the Cilician Massacres**
(Summary)

Mihran Minassian
mihran.min@gmail.com

Relatively little has been written about the small Armenian community of the Alexandretta Sandjak. There are no separate monographs which shed light on the history of the Armenian-inhabited towns and villages of the region. Likewise, there is no separate study of the events that took place in the Sandjak during the 1909 Cilician Massacres.

Though the centre of the Sandjak, the city of Alexandretta, was not directly subjected to massacres, nonetheless certain villages of the Sandjak were and had huge human and financial losses, like, for instance, the village of Kerekhan. Most of its inhabitants was massacred, while some killings, looting and destruction took place in other villages of the Sandjak. These, however, did not become full scale carnage.

After a brief overview of the Alexandretta Sanjak, the author highlights Armenian aspects of the region and produces – from the Aleppo Armenian Prelacy - three unpublished documents which shed light on the oppression and violence that the Armenians of the region faced during the Cilician Massacres.

The documents are written by the local vice-prelate, Father Krikor Minasian. The first one is a letter describing the prevailing conditions in and around the cities of Alexandretta, Beylan and Chork Marzban and the massacres and looting that took place. The second document is a report about the killings that took place in the villages of the Sandjak, with the names of the victims. The third is a detailed answer to the questionnaire that was sent from Aleppo concerning the killings, looting and related acts that took place in the Sandjak during the atrocities.

The documents shed new light on the events and enrich knowledge not only of the history of the Armenians of the Sandjak of Alexandretta but add up to a fuller picture and understanding of the Adana Massacres.